ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան, 0023, Արշակունյաց պողոտա 7
Հեռ.՝ +374-60-474144

21.02.20թ. № Ա/1927-20

Ձեր _____ առ _____

«Այթիոեսուրսիս» ՍՊԸ
տնօրեն Դավիթ Շահբազյանին

Ծանուցում
պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Շահբազյան,

Կադաստրի կոմիտեի և «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի նոյեմբերի 27-ին կնքված N ԿԿ-ԳՀԾՁԲ-20/03 ծածկագրով պայմանագրի շրջանակում Ձեր ընկերությունը պետք է մատուցեր հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայություններ, սակայն 2020 թվականի հունվարի 31-ին կնքված համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է սպասարկման գրասենյակներում քաղաքացիների դժգոհության, քանի որ Ձեր կողմից մատուցված ծառայությունների որակը չի համապատասխանում պայմանագրում առկա տեխնիկական բնութագրով սահմանված որակի պահանջներին:

Բազմիցս Ձեզ է ներկայացվել մատուցված ծառայության որակի վերաբերյալ Կադաստրի կոմիտեի գնահատականը, սակայն Ձեր կողմից ամբողջությամբ չեն շտկվել տեխնիկական խնդիրները:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Կադաստրի կոմիտեի և «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը կհամարվի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից:

Կադաստրի
կոմիտե

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կադաստրի կոմիտեն «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկելու է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնելու է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, իսկ տուժանքի մասին համաձայնագիրը (պայմանագրի կատարման ապահովում) և կից պահանջագիրը բնօրինակներով ներկայացնելու է «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ին՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005000758 հաշվեհամարին 630000 (վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝ Գագիկ Եգանյան
Ժամանակավոր պաշտոնակատար

2/21/2020

X

ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ
Deputy Secretary General
Signed by: YEGANYAN GAGIK 1407700081

Կատարող՝ Լ. Մանուչարյան
Գնումների կազմակերպման բաժնի պետ՝ Հ. Մանուկյան
Հեռ.՝ 060-474142

Կադաստրի
կոմիտե